ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» մայիսի 2012թ. N_-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ, ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ h.33/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԵՆԹԱԿԱՅԱՆԸ ԵՎ ԿԱԹՍԱՅԱՏՈՒՆԸ ՈՒ ԴՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 87-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2012 թվականի ծրագրի վերաբերյալ» h.345-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝

1) Երևան համայնքի սեփականություն համարվող, Բուզանդի փողոցի h.33/2 հասցեում գտնվող «Գրիար-Սպասարկում» ՍՊԸ-ին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված 331.8քմ մակերեսով էլեկտրաենթակայանի և կաթսայատան շենքը ու դրա զբաղեցրած հողամասը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 12.03.2011թ. h.2707600 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) «Գրիար-Սպասարկում» ՍՊԸ-ին,

2) Երևան համայնքի սեփականություն համարվող, Բուզանդի փողոցի h.33/2 հասցեում գտնվող «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված 108.5քմ մակերեսով էլեկտրաենթակայանի և կաթսայատան շենքը ու դրա զբաղեցրած հողամասը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 18.08.2010թ. h.2671144 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին։

2. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված, Երևան համայնքի սեփականություն համարվող, Բուզանդի փողոցի հ.33/2 հասցեում գտնվող էլեկտրաենթակայանի և կաթսայատան շենքի զբաղեցրած 300.0քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 02.03.2010թ. հ.2277777 վկայական) սեփականության իրավունքով անհատույց «Գրիբար-Սպասարկում» ՍՊԸ-ին և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին ենթակա է փոխանցման՝ որպես համատեղ սեփականություն։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ, ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ հ.33/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԵՆԹԱԿԱՅԱՆԸ ԵՎ ԿԱԹՍԱՅԱՏՈՒՆԸ ՈՒ ԴՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի Բուզանդի փողոցին հարող տարածքի նորակառույց բնակելի և հասարակական շենքերի էներգամատակարարումն ապահովելու նպատակով Բուզանդի փողոցի հ.33/2 հասցեում կառուցվել է շինություն, որը նախատեսված է ինչպես կաթսայատուն, այնպես էլ էլեկտրաենթակայան և բաշխիչ կետ շահագործելու համար: Շինարարության պատվիրատուն է հանդիսացել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը, իսկ կապալառուն՝ տարածքի կառուցապատող «Գրիար» ՓԲԸ-ն:

Նորակառույց ենթակայանի շահագործումը նախապատրաստելու նպատակով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն իրականացրել է սարքավորումների տեղադրման և էլեկտրամոնտաժման աշխատանքներ և համաձայն ընկերության կողմից տրամադրված տեղեկատվության, այդ աշխատանքների կատարման համար ծախսվել է 55 մլն ՀՀ դրամի ֆինանսական միջոցներ, իսկ Բուզանդի հ.33/2 հասցեում գտնվող էլեկտրաենթակայանը և կաթսայատունը ամբողջովին կառուցվել է «Գրիար» ՓԲԸ-ի միջոցներով և այն նախատեսված է սպասարկելու հարակից բազմաֆունկցիոնալ համալիրներին: «Գրիար» ՓԲԸ-ն տվել է իր համաձայնությունը սահմանված կարգով ընկերության իրավունքը դադարեցնելու և կաթսայատունը մշտական օգտագործման իրավունքով «Գրիար-Սպասարկում» ՍՊԸ-ին փոխանցելու վերաբերյալ:

Երևան քաղաքի ավագանու 18.06.2010թ. հ.113-Ա և 23.12.2010թ. հ.174-Ա որոշումներով Բուզանդի հ.33/2 հասցեում գտնվող էլեկտրաենթակայանը և կաթսայատունն անժամկետ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 18.08.2010թ. հ.2671144 վկայական) և «Գրիար-Սպասարկում» ՍՊԸ-ին (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 12.03.2011թ. հ.2707600 վկայական):

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն և «Գրիար-Սպասարկում» ՍՊԸ-ն դիմել են Երևանի քաղաքապետարան՝ Բուզանդի փողոցի հ.33/2 հասցեում գտնվող, ընկերություններին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված համապատասխանաբար 331.8 քմ և 108.5 քմ մակերեսներով տարածքները սեփականության

իրավունքով օտարելու խնդրանքով և հայտնելով իրենց պատրաստակամությունը նորակառույց էլեկտրաենթակայանին և կաթսայատանը կից, Բուզանդի հ.33 հասցեում գտնվող, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող թիվ 18 ենթակայանի շինության քանդման և դրանով զբաղեցրած հողամասի ազատման գործողությունների իրականացման գործում:

Ենթակայանի շինության քանդման աշխատանքների հրատապությունը կապված է այն հանգամանքի հետ, որ դրա հարևանությամբ է տեղակայված անսարք, վթարային վիճակում գտնվող շինարարական կռունկ, որը լուրջ վտանգ է ներակայացնում հարակից շենքերի համար և անհապաղ ենթակա է ապամոնտաժման: Աշխատանքների իրականացման համար խոչընդոտ է հանդիսանում թիվ 18 ենթակայանը: Բացի այդ, համաձայն տարածքի հատակագծի, բակային տարածքի մուտքի ճանապարհը, որը միաժամանակ հանդիսանում է նաև միակ հակահրդեհային մոտեցումը, պետք է անցնի թիվ 18 ենթակայանի զբաղեցրած հողամասով:

Հաշվի առնելով, որ 2011 թվականի դեկտեմբեր ամսից գործարկվել է Բուզանդի փողոցի հ.33/2 հասցեում գտնվող նոր ենթակայանը և իր նախագծային հզորությամբ ապահովում է շրջակա տարածքի բնակչության և բազմաֆունկցիոնալ համալիրների բնականոն էլեկտրամատակարարումը, ինչի հետ կապված դադարեցվել է տարածքում գտնվող նախկին թիվ 18 ենթակայանի գործունեությունը և նոր էլեկտրաենթակայանը և կաթսայատունը կառուցվել և գործարկվել է նշված ընկերությունների միջոցների հաշվին, ինչպես նաև նկատի ունենալով, որ ենթակայանի շինության ապամոնտաժման աշխատանքներն իրականացվելու է ընկերությունների կողմից, ստեղծված իրավիճակում անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող, Բուզանդի փողոցի հ.33/2 հասցեում գտնվող էլեկտրաենթակայանը և կաթսայատունը ու դրա զբաղեցրած հողամասն անհատույց օտարելու մասին» որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ, ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ հ.33/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԵՆԹԱԿԱՅԱՆԸ ԵՎ ԿԱԹՍԱՅԱՏՈՒՆԸ ՈՒ ԴՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող, Բուզանդի փողոցի հ.33/2 հասցեում գտնվող էլեկտրաենթակայանը և կաթսայատունը ու դրա զբաղեցրած հողամասն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ, ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ հ.33/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԵՆԹԱԿԱՅԱՆԸ ԵՎ ԿԱԹՍԱՅԱՏՈՒՆԸ ՈՒ ԴՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող, Բուզանդի փողոցի հ.33/2 հասցեում գտնվող էլեկտրաենթակայանը և կաթսայատունը ու դրա զբաղեցրած հողամասն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ